(ստորագրություն)

ԿԱՌՄԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՆԱԶԵՐՅԱՆ

*[Handwritten signature]*

(ստորագրություն)

*[Handwritten signature]*

u.s



Հավելված N 1  
սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման,  
էլեկտրական էներգիայի բաշխման և էլեկտրական  
էներգիայի երաշխավորված մատակարարման մասին  
թիվ 0559944 պայմանագրի, թիվ 90999111 պատվեր



### ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿ

1. Միացման վճարի չափն է՝ 24,428,508
2. Միացման վճարը հաշվարկվել է համաձայն ՀԾԿՀ 25.12.2019թ. թիվ 523-Ն ՈՐՈՇՄԱՆ ԳԼՈՒԽ 31-ի թիվ 225 ենթակետի բանաձևով՝



$$\text{ՄՎ} = (24,889 \times 72) + (9 \times 203,000 + 195 \times 7,500 \times 1.4 + 106 \times 59,000 \times 3) = 1,792,008 + 22,636,500 = 24,428,508 \text{ դրամ}$$

$$\text{ՏԱ՛} = 22,603,329 : 0,090818 : 10000 = 24,889$$


Բաշխող՝

  
(անուն ազգանուն, գրաչրոն)  
  
(ստորագրություն)

Կառուցապատող՝

  
(անուն ազգանուն)  
  
(ստորագրություն)

ԷԼԵԿՏՐԱՄԱՍԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ - ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՅԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՏՎԵՐ

1.	Նպխանագրան կոդ	90999111	Ամսաթիվ 23/02/2023			
2.	Ցանց	ԱՐԱԲԿԻՐ	Մասնաճյուղ	ԵՐԵՎԱՆԻ ԷՍԴ		
3.	Պատվիրատուի տվյալներ	Հեռախոս 37477 4790738	Կարգավիճակ	Բնակիչ		
			Անվանում	ՎԱՐՔԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՆԱԶԵՐՑԱՆ		
			Անձնագիր	008784225, 099 5/31/2016		
			Սոց. քարտ			
			Ղեկավար			
4.	Էլեկտրասնուցման տարածքի հասցեն		22 ԵՐԵՎԱՆ, ք.ԵՐԵՎԱՆ, ՂԱՓԱՆՑՅԱՆ փող. 4/9			
5.	Միացման տեսակ	Եռափուլ	6.	Համայնք	ԱՐԱԲԿԻՐ	
7.	Պահանջվող հզորություն (ԿՎԱ)	664	8.	Սնուցման տեսակ	Բազմաբնակարանային շենք	
9.	Լարման մակարդակ (ԿՎ)	0.40	10.	Միացման ամսաթիվ		
11.	Էլեկտրամատակարարման իրականացման տեխնիկական պայմանների առաջարկ					
<p>Ղափանցյան 4/9 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի էլ. մատակարարումն իրականացնելու համար, համաձայն նախագծի կառուցել համապատասխան հզորության երկրտանաֆորմատորային ենթակայան, նախապես լուծելով հողանտնագրական խնդիրը, որը կարող է տրամադրել նաև կառուցապատող ընկերությունը: Տվյալ հաստվածում առկա է հեռանկարային զարգացում: Նոր ենթակայանի 6կՎ էլ. մատակարարումն իրականացնել ՏԵ1628-ի 6կՎ ԲՄ-ի 1-րդ և 2-րդ հատկանից համաձայն նախագծի: ՏԵ1628-ի 6կՎ տեղադրելով տեղադրելով 2 հալ KD տիպի 6 կՎ բջիջ: Նոր կառուցվող ենթակայանի 6կՎ կողմում նախատեսել լրացուցիչ 6կՎ բջիջներ, քանի որ նշված ենթակայանի Բ/Ն կողմից նախատեսվում է հեռանկարային զարգացում: Ղափանցյան 4/9 հասցեի 0.4կՎ էլ. մատակարարումը իրականացնել նոր ենթակայանի 0.4կՎ վահաններից: Հաշվարարային սարքերը տեղադրել սանմանագատման կետում: Անվտանգության գոտին խախտված չէ: Քաղաքապետարանի կողմից հողահատկացում չլինելու, ինչպես նաև կառուցապատողի կողմից տարածք չտրամադրելու դեպքում պատվերը տեխնիկապետ ներառվող չի վիճի իրականացնել:</p>						
Անհրաժեշտ փաստաթղթերը ստուգեց և պատվերն ընդունեց <i>Սեդ</i> / Ս. Սեդրազյան /						
Տեխնիկական պայմանների առաջարկին համաձայն էմ. ծանոթ էմ 'նոր սպառողի' կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգ էլեկտրական ցանցին միացման կարգին, որի համար ստորագրում էմ						
Ցանցի պետ <i>Սեդրազյան</i>						
Էլեկտրասնուցման վերակառուցվող գծի գույքահամար և անվանում						
12.						
Էլեկտրասնուցման կառուցվող գծին տրվող						
13.	Գույքահամար	Անվանում	Տեսակ	Կապակցող խմբի կոդ	Հասցե	ԼՊ
	01069790	6.0 կՎ մալու խային գիծ	322107	HUSPAYM00203	Ղափանցյան 4/9	113836
	01069791	0.4 կՎ մալու խային գիծ	323101	HUSPAYM00203	Ղափանցյան 4/9	113836

ԵՐԵՎԱՆԻ ԷՍԴ \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ /

Հաստատել մասնաճյուղի կողմից ներկայացված տեխնիկական պայմանի առաջարկը \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ /

Պատվիրել անհրաժեշտ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը \_\_\_\_\_

Մերժել ներկայացված առաջարկը \_\_\_\_\_

Մերժման պատճառները \_\_\_\_\_

Ներկայացնել նոր առաջարկ \_\_\_\_\_

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ԶԱՆՏԵՐ ՓԲԸ

Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

---



Закрытое акционерное общество  
«Газпром Армения»  
(ЗАО «Газпром Армения»)

**ЗАМЕСТИТЕЛЬ  
ГЕНЕРАЛЬНОГО ДИРЕКТОРА  
ГЛАВНЫЙ ИНЖЕНЕР**

Тбилисское шоссе, 43, Ереван, Республика Армения, 0091  
тел.: (374 10) 294-888, 294-753, факс: (374 10) 294-728  
e-mail: inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«Գազպրոմ Արմենիա»  
փակ բաժնետիրական ընկերություն  
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

**ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ  
ՏԵՂԱԿԱԼ  
ԳԼԽԱՎՈՐ ԶԱՐՏԱՐԱԳԵՏ**

0091, ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43  
հեռ.՝ (374 10) 294-888, 294-753, ֆաքս՝ (374 10) 294-728  
էլ. փոստ՝ inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

« 14 » 07 2023 թ.

№ 02/18.1/2441-2023

«ՋԻ ԷՄ ԴԻՎԵԼԸՓՄԵՆԹ» ՍՊԸ տնօրեն  
պարոն Ռ. Ալավերդյանին

պատճենը՝

Երևանի ԳԳՄ տնօրեն  
պարոն Վ. Արտաշեսյանին

Գազիֆիկացման վերաբերյալ


«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն թույլատրում է պատվիրատուի միջոցներով, պայմանագրային կարգով՝ Երևանի ԳԳՄ 12.07.2023թ. № Ն/53.13/25259-2023 գրությամբ առաջադրված տեխնիկական պայմաններին համապատասխան, արտոնագիր ունեցող կազմակերպությունների միջոցով, կազմել Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ղափանցյան փողոց թիվ 4/9 հասցեում «ՋԻ ԷՄ ԴԻՎԵԼԸՓՄԵՆԹ» ՍՊԸ կողմից կառուցվող բազմաբնակարան շենքի գազիֆիկացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և իրականացնել շինհավաքակցման աշխատանքները՝ մասնաճյուղի կողմից համաձայնեցված և վերահսկողություն իրականացնող իրավասու մարմիններում գրանցված նախագծով:

Նախագծման և կառուցման աշխատանքներն իրականացնել ՀՀ իրավական ակտերով սահմանված նորմերի (այդ թվում՝ շինարարական նորմերի և տեխնիկական կանոնակարգերի) դրույթների պահանջներին համապատասխան, իսկ գազամատակարարումը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005թ. հուլիսի 8-ի N 95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով» սահմանված կարգով, ապահովելով «Գազարաշխման համակարգի անվտանգության և շահագործման կանոնները» տեխնիկական կանոնակարգի պահանջները:

Առդիր՝ գազիֆիկացման տեխնիկական պայմանները և եզրակացությունը - 4 թերթ:

Ա. Գարրիբյան

Կապ. Հ.Հերգոյան  
Հեռ. (010) 294-796

  
 Ա. Գաբրիելյան  
 «13» 07.2023թ.

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ղափանցյան փողոց թիվ 4/9 հասցեում  
«ԶԻ ԷՄ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍՊԸ կողմից կառուցվող բազմաբնակարան շենքի  
գազամատակարարում  
 (օբյեկտի անվանումը և հասցեն)



Գործող գազատար	Ելակետային տվյալներ
• անվանումը	«Արաբկիր Ինժեներինգ» ՓԲԸ ս/գ ՊԷ գազատար
• միացման կետը (կետերը)	Ըստ տեխնիկական պայմանների
• նվազագույն և առավելագույն ճնշումները միացման կետում (կետերում) (P <sub>min</sub> - P <sub>max</sub> ) (կգ/սմ <sup>2</sup> )	1.2-1.5
• գազատարի տրամագիծը (մմ)	400 ՊԷ
• խողովակի նյութը	-
• գործող գազատարի փոփոխության (վեռակառուցման, վերատեղադրման, տեղափոխման) անհրաժեշտություն	-
<b>Գազիֆիկացվող Օբյեկտ</b>	
• օգտագործման նպատակը	կենցաղային
• առավելագույն հզորությունը (գազի առավելագույն ժամային ծախսը) միացման կետում (կետերում) (մ <sup>3</sup> /ժամ)	270
• հեռավորությունը միացման կետից (մ)	40
• գազի հաշվառման սարք (համապատասխան էլեկտրոնային ճշտությամբ)	-
<b>Լրացուցիչ պայմաններ</b>	
• այլընտրանքային վառելիքի պաշարի նախատեսում	-
• գործողության ժամկետը	1 տարի
• Օբյեկտի առանձնահատկությամբ պայմանավորված այլ պայմաններ	Գազասպառման ծավալներին համապատասխան ճնշման կարգավորիչի տեղադրում

Տրամադրման հիմքը՝

- Երևանի ԳԳՄ 12.07.2023թ. № Ն/53.13/25259-2023 գրությունը
- Տեխնիկական պայմանները

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ  
 ԳԲՑ և ՆԳՀ Շ ու Ս բաժնի պետ

Կազմեց

  
 Ա. Պերոկյան  
  
 Շ. Չերգյան

«Գազարոմ Արմենիա» ՓԲԸ  
Երևանի գգս  
Չարենցի 141/3 , հեռ.010-57-03-07  
*Հասցեն և հեռախոսահամարը*



## ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ք. Երևան, Արաբկիր վարչական շրջանի  
Ղափանցյան փողոց թիվ 4/9 հասցեում՝  
“ՋԻ ԷՍ ԴԻՎԵԼԸՓՄԵՆԹ” ՍՊԸ կողմից կառուցվող  
բազմաբնակարան բնակելի շենք

2023թ.

Հաստատում եմ՝  
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ  
Երևանի ԳԳՄ

Գլխավոր տնօրենի տեղակալ -  
Գլխավոր ճարտարագետ

*(Ստորագրություն)*

Ս.Թադևոսյան  
(անունը, ազգանունը)


12.07.....2023թ.

**ՏԵՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**


**Ք. Երևան, Արարկիր վարչական շրջանի  
Ղափանցյան փողոց թիվ 4/9 հասցեում՝  
«ՋԻ ԷՍ ԴԻՎԵԼԸՓՄԵՆԹ» ՍՊԸ կողմից կառուցվող  
բազմաբնակարան բնակելի շենք**  
(օբյեկտի անվանումը և հասցեն)

Գործող գազատար	Ելակետային տվյալներ
• անվանումը	
• միացման կետը (կետերը)	Ա
• նվազագույն և առավելագույն ճնշումները միացման կետում (կետերում) (Pmin - Pmax) (կգ/սմ <sup>2</sup> )	1.2-1.5
• գազատարի տրամագիծը (մմ)	D= 315ՊԷ
<b>Գազի ֆիկացվող Օբյեկտ</b>	
• օգտագործման նպատակը	կենցաղային
• առավելագույն հզորությունը (գազի առավելագույն ժամային ծախսը) միացման կետում (կետերում) (մ <sup>3</sup> /ժամ.)	G=270
• հեռավորությունը միացման կետից (մ)	40
• գազի հաշվառման սարք (համապատասխան էլեկտրոնային ճշտիչով)	-
<b>Լրացուցիչ պայմաններ</b>	
• այլընտրանքային վառելիքի պաշարի նախատեսում	
• գործողության ժամկետը	1 տարի
• Օբյեկտի առանձնահատկությամբ պայմանավորված այլ պայմաններ	

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ




ՇՏ բաժնի պետ

  
(համրագրություն)

Խ. Հովհաննիսյան  
(անունը, ազգանունը)

/ Կազմեց

  
(ստորագրությունը)

Ա. Շահնագարյան  
(անունը, ազգանունը)





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

№ ՔՏՄ/ՕԳ.2.1/18076-23

18 / 08  
2023 թ.

«ՋԻ ԷՄ ԴԻՎԵԼԸՓՄԵՆԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՏՆՕՐԵՆ ՈՈՒԲԵՆ ԱԼԱԿԵՐԴՅԱՆԻՆ  
ք.Երևան, Սայաթ Նովա 192.  
Էլ. փոստ՝ rubo2@yandex.ru

**Հարգելի պարոն Ալավերդյան**

Ի պատասխան Ձեր 10.08.2023թ. դիմումի՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը քննարկել է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ղափանցյան փողոց 4/9 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի ինժեներական նախագծերը, և տեղեկացնում է, որ դրանք համապատասխանում են հրդեհային անվտանգության պահանջներին:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ**

*X. Papiyan Araz*

ԱՐԱԶ ՊԱՊԻԿՅԱՆ  
Signed by: PAPIKYAN ARAZ 3802880102

**ՄՐԱԶ  
ՊԱՊԻԿՅԱՆ**

Կատարող՝ *Ա.Ցազդրյան*  
Ստորաբաժանու մ՝ *Տ և ՀՍ վարչություն, ԼՏՓՎ բաժին*  
Հեռ.՝ *060 86 66 66 (10-43)*



Հասցե՝ 0054, Երևան, Ղալթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Սիկոյան 109/8,  
Էլ. փոստ՝ utfsib@utfsib.gov.am, հեռախոսահամար՝ (+374 60) 86 66 66



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ԳԱԱ «Ա.Նազարովի անվան  
երկրաֆիզիկայի և ինժեներային  
սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ  
տնօրեն՝ Զոն Կարապետյան  
2022թ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաք Արաբկիր համայնքի Գ.Ղափանցյան փողոց 4/9 հասցեում գտնվող տեղամասի (տարածքի) գրունտների լայնական ալիքների տարածման միջին արագությունների և գերակայող պարբերությունների զնահատման նպատակով երկրաֆիզիկական ուսումնասիրությունների

ԳՅՈՒՄՐԻ 2022


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
1. Գրունտների ելակետային սեյսմիկ վտանգի որոշում	4
2. Սեյսմիկ զոնդավորման հետազոտությունների մեթոդիկան, օգտագործված սարքավորումները և ստացված արդյունքները	4
2.1. Սեյսմիկ զոնդավորում բազմակապուղի մակերևույթային ալիքների տարածման արագությունների որոշում և վերլուծություն MASW եղանակով	4
2.2. Սեյսմիկ ուսումնասիրությունների արդյունքները	6
3. Տեղամասի ապարների գերակշռող պարբերության $T_0$ արժեքները միկրոտատանումների գրանցումների եղանակով	8
Եզրակացություն	13

## Ներածություն

Համաձայն «Հարությունյան Արքիթեքթ» ՍՊԸ-ի և «ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջև կնքված թիվ N° 1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ տեխնիկական առաջադրանքի Արաբկիր համայնքի Քանաքեռ ՀԷԿ փողոցի 5/2 հասցեում գտնվող տեղամասի (տարածքի) գրունտների լայնական ալիքների տարածման միջին արագությունների և գերակայող պարբերությունների գնահատման նպատակով կատարվել են երկրաֆիզիկական ուսումնասիրություններ սեսյմիկ զոնդավորման բազմակապուղի մակերևույթային ալիքների վերլուծության (MASW) և միկրոտատանումների գրանցումների եղանակներով:

Ուսումնասիրությունների կետերի տեղադիրքը բերված է նկար 1-ում:



Նկար 1. Սեսյմիկ զոնդավորման (MASW) և միկրոտատանումների կետերի տեղադիրքերը

## 1. Գրունտների ելակետային սեյսմիկ վտանգի որոշում

Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Քանաքեռ ՀԷԿ փողոցի 5/2 հասցեում գտնվող տեղամասի (տարածքի) գրունտների լայնական ալիքների տարածման միջին արագությունների և գերակայող պարբերությունների որոշման համար հիմք է ընդունվել ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտևորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որին համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:


## 2. Սեյսմիկ զոնդավորման հետազոտությունների մեթոդիկան, օգտագործված սարքավորումները և ստացված արդյունքները

### 2.1. Սեյսմիկ զոնդավորում բազմակապուղի մակերևույթային ալիքների տարածման արագությունների որոշում և վերլուծություն MASW եղանակով

Բազմակապուղի մակերևույթային ալիքների վերլուծությունը (MASW) ենթամակերևույթային շերտում լայնական ալիքների տարածման արագությունների գնահատման մեթոդ է: Այն թույլ է տալիս որոշել սպեկտրալ կոմպոնենտների փուլային արագությունները և կառուցել լայնական ալիքների արագությունների ուղղահայաց պրոֆիլը մեր դեպքում Ռելեյի ալիքների գրանցման միջոցով:

Անհամասեռ միջավայրում լայնական և երկայնական ալիքների արագությունները փոխվում են կախված խորությունից: Դա առաջացնում է փուլային արագությունների տարբերություն մակերևույթային ալիքների առանձին սպեկտրալ բաղադրիչների համար, որը կախված է ալիքի երկարությունից:

Գործնականում յուրաքանչյուր սեյսմոգրամայի համար հաշվարկվում է փուլային արագությունների արժեքների հավաքածու, արդյունքում տեղի է ունենում դիսպերսիոն կորի ինվերսիա: Տվյալների մշակման արդյունքում ստացվում է լայնական ալիքների արագության արժեքների ուղղահայաց կտրվածքը: Ուսումնասիրությունների ընթացքում MASW տվյալների գրանցումը կատարվել է իրար լրացնող զոնդավորումների միջոցով (նկ. 2.): Պահանջվող խորություն ապահովելու համար օգտագործված են բազմակապուղի սեյսմոկայան և ցածր հաճախականության սեյսմոընդունիչներ:



Նկար 2. MASW մեթոդով դաշտային դիտարկումների տեխնոլոգիան և գրանցումների սխեման

Գործնականում մակերևույթային ալիքների գրանցումներն իրականացվել են Իտալական արտադրության PASI GEA24 բազմակապուղի թվային սեյսմիկ կայանի կիրառմամբ (նկ. 3.):




Նկար 3. PASI GEA24 թվային սեյսմիկ կայանի համալիր սարքավորումները

Գրանցումներն կատարվել են տեղամասի 4 կետերով, որոնց տեղադիրքը բերված է նկար 1-ի վրա: Սեյսմիկ ալիքները հարուցվել են 20 կիլոգրամանոց մուրճի օգնությամբ:

## 2.2. Սեյսմիկ ուսումնասիրությունների արդյունքները

Դաշտային գրանցումների մշակման համար օգտագործված է Zondst2d ծրագրերի մասնագիտացված փաթեթը: Յուրաքանչյուր սեյսմոգրամ ձևափոխվում է երկչափ սպեկտրի, որից հաշվարկվում է դիսպերսիոն կորը և լայնական ալիքների արագությունների ուղղահայաց պրոֆիլը: Վերջիններիս հիման վրա կառուցված են լայնական ալիքների արագությունների 2D կտրվածքները (օրինակը բերված է նկար 4-ում):




Նկար 4. Սեյսմիկ մակերևութային ալիքների գրանցման և մշակման օրինակ

Ճարտարագիտա-երկրաբանական կտրվածքի վերին շերտերում գրունտների դինամիկ բնութագրերը մեկնաբանվել են որպես լայնական ալիքների տարածման միջին արագություն ( $V_s30$ ):


Ներքո ներկայացված են ստացված արդյունքները ուսումնասիրված տեղամասի 4 կետերի համար:

### Զոնդավորում MASW 1



#	Vs	Vp	$\rho$	Z	H
1	493.73	698.31	1.5	0	3.0
2	614.78	869.52	1.5	3.0	4.1
3	841.51	1190.2	1.5	7.1	6.4
4	1143.4	1617.1	1.5	13.6	6.6
5	1650.3	2334.2	1.5	20.1	10.3
6	1999.7	2828.3	1.5	30.4	"


### Ջնդավորում MASW 2



- Vm  
 - Vo  
 - Vc

N	Vs	Vp	$\rho$	Z	H
1	400	667.62	1.5	0	3.0
2	555.39	926.98	1.5	3.0	4.2
3	819.71	1368.1	1.5	7.2	4.7
4	1211.3	2021.7	1.5	11.9	9.6
5	1555.7	2596.6	1.5	21.5	9.0
6	2023.5	3377.4	1.5	30.5	*


### Ջնդավորում MASW 3



- Vm  
 - Vo  
 - Vc

N	Vs	Vp	$\rho$	Z	H
1	546.74	773.29	1.5	0	3.0
2	640.29	905.60	1.5	3.0	4.1
3	808.74	1143.8	1.5	7.1	5.7
4	1078.3	1525.1	1.5	12.8	7.6
5	1506.3	2130.5	1.5	20.3	10.1
6	1999.8	2828.4	1.5	30.4	*

### Ջնդավորում MASW 4



- Vm  
 - Vo  
 - Vc

N	Vs	Vp	$\rho$	Z	H
1	495.37	700.64	1.5	0	3.0
2	620.97	878.28	1.5	3.0	4.1
3	870.56	1231.3	1.5	7.1	5.5
4	1225.9	1733.8	1.5	12.6	7.5
5	1659.7	2347.4	1.5	20.2	10.3
6	1999.6	2828.3	1.5	30.5	*



**Ուսումնասիրված տեղամասի լայնական ալիքների տարածման միջին արագության ( $V_{S30}$ ) ընդհանրացված արդյունքները**

<b>NN</b>	<b><math>V_{S30}</math> (մ/վ)</b>
MASW 1	932.5
MASW 2	877.0
MASW 3	927.4
MASW 4	964.2

Ընդհանրացնելով նշենք, որ ուսումնասիրված տեղամասի գրունտների լայնական ալիքների տարածման միջին արագությունը՝  $V_S > 850$  մ/վ, համաձայն «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի (ՀՀՇՆ 20.04) աղյուսակ 3-ի անհամասեռ գրունտային հիմնատակի գրունտները համապատասխանում են **I-ին կարգի**:

Դրված խնդրի լուծման նպատակով ներքո որոշված են նաև սովորաշերտի գրունտների գերակշռող պարբերության  $T_0$  արժեքները:

**3. Տեղամասի ապարների գերակշռող պարբերության  $T_0$  արժեքները միկրոտատանումների գրանցումների եղանակով**

Առաջարկված տարածքում բնապայման փորձարկումները իրականացվել են գրանցելով միկրոտատանումներ հետազոտվող դիտակետերի գերակշռող պարբերությունները որոշելու նպատակով: Փորձարկումները կատարվել են տարածքի 6 դիտակետերում (տես նկ.նկ. 1 և 5):



Նկար 5. Տարածքում իրականացված բնապայման փորձարկումների սխեմա

Միկրոսեյսմների չափումները իրականացվել են ժամանակակից շարժական սեյսմիկ կայանի միջոցով (նկ.6): Գրանցիչի միջոցով հնարավորություն է ընձեռվում առցանց դիտել գրանցումները, որոնք ցուցադրվում են համակարգչի մոնիտորի վրա՝ օգտագործելով

հատուկ մշակված ծրագիր: Գրանցման հաճախականությունը մեկ վայրկյանում 200 նմուշ է:




Նկար 6. Ժամանակակից սեյսմիկ կայան միկրոսեյսմիկ տատանումների գրանցման համար



Միկրոսեյսմներից ստացված գրանցումների հիման վրա հաշվարկված Ֆուրյեի սպեկտրները բերված են նկարներ 7-ում, 8-ում և 9-ում: Ներքո աղյուսակում բերված են Ֆուրյեի սպեկտրներից որոշված գերակշռող պարբերությունների արժեքները և դրանց համեմատական հաշվարկային մեծությունները: Ըստ ՀՀՇՆ 20.04-ի 17 կետի միկրոսեյսմների հիման վրա  $T_0$  արժեքները որոշելիս, որպես դրանց հաշվարկային ընդունվում է  $1.15 \cdot T_0$  մեծությունը:

Դիտակետեր	Գերակշռող պարբերությունների արժեքները $T_0$	$1.15 \cdot T_0$ -ի հաշվարկային մեծությունները	Անհամասեռ գրունտային հիմնատակի կարգը
1	0.12 վրկ.	0.138 վրկ.	I
2	0.21 վրկ.	0.242 վրկ.	I
3	0.175 վրկ.	0.201 վրկ.	I
4	0.26 վրկ.	0.299 վրկ.	I
5	0.284 վրկ.	0.327 վրկ.	I
6	0.269 վրկ.	0.309 վրկ.	I


Ստացված պարբերությունների հիմնական գագաթնակետները գտնվում են 0.138-0.327վրկ. տիրույթում, որոնք ըստ ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի (աղյուսակ 3) I-ին կարգի գրունտներ են:




$T=0.12$  վրկ.





$T=0.21$  վրկ.




Նկար 7. Միկրոսեյանների գրանցումները և նրանց համապատասխան Ֆուրյեյի սպեկտրները




$T=0.175$  վրկ.





$T=0.26$  վրկ.




Նկար 8. Միկրոսեյսմների գրանցումները և նրանց համապատասխան Ֆուրյեյի սպեկտրները



$T=0.284$  վրկ.



$T=0.269$  վրկ.



Նկար 9. Միկրոսեյսմների գրանցումները և նրանց համապատասխան Ֆուրյեյի սպեկտրները

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանրացնելով իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, որոշված սեյսմիկ զոնդավորման բազմակապուղի մակերևույթային ալիքների վերլուծության (MASW) և միկրոտատանումների գրանցումների եղանակներով տեղամասի ստվարաշերտի գրունտները համաձայն ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի 16-րդ կետի պետք է ընդունել որպես I-ին կարգ:

Պատասխանտու կարարողներ՝

Ե.գ.թ. Զ. Կարապետյան

Ե.գ.դ. Ռ. Մինասյան

Ե.գ.թ. Ռ. Քարամյան

Ա. Գևորգյան

Ռ. Կարապետյան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ԳԱԱ «Ա.Նազարովի անվան  
Երկրաֆիզիկայի և ինժեներային  
սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ  
տնօրեն՝ Զոհն Կարապետյան  
2022թ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաք Արաբկիր համայնքի Գ.Ղափանցյան փողոց 4/9 հասցեում կառուցվող  
բնակելի շենքի նախագծման նպատակով սինթետիկ արտելերոգրամայի ստացման  
վերաբերյալ

ԳՅՈՒՄՐԻ 2022

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1.ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՆԱՔԵՌ ՀԷԿ ՓՈՂՈՑԻ 5/2 ՀԱՍՑԵԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՌԵԼԻԵՖԸ, ԵՐԿՐԱԲԱՆԱՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍԵՅՍՄԻԿ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.....	4
2. ՍԻՆԹԵՏԻԿ ԱՔՍԵԼԵՐՈԳՐԱՄԱՅԻ ՍՏԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ .....	12
2.1 Սինթետիկ աքսելերոգրամայի հաշվարկման մեթոդաբանությունը .....	12
2.2.Սինթետիկ աքսելերոգրամայի ստացման արդյունքները.....	14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....	16



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն «Հարությունյան Արքիթեքթց» ՍՊԸ-ի և «ՀՀ ԳԱԱ Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջև կնքված թիվ N° 2/ԱԿՍ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ տեխնիկական առաջադրանքի Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Քանաքեռ ՀԷԿ փողոցի 5/2 հասցեի տարածքում կառուցվող բնակելի շենքի նախագծման նպատակով ստանալ այդ տարածքի համար բնորոշ սինթեզված արտելերոգրամա:


Ուսումնասիրվող տեղամասի տեղադիրքը բերված է նկար 1-ում:



Նկար 1. Ուսումնասիրվող տեղամասի տեղադիրքը, Մ 1:1000


**1.ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՔԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՆԱՔԵՌ ՀԷԿ ՓՈՂՈՑԻ 5/2 ՀԱՍՑԵԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՌԵԼԻԵՖԸ, ԵՐԿՐԱԲԱՆԱՏԵԿՏՈՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍԵՅՄԱՄԻԿ ԱՃԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

Երևան քաղաքի տարածքը գտնվում է ծովի մակարդակից 830մ-ից 1550մ բարձրության վրա: Հյուսիս-արևելյան լեռնային տարածքն ամենաբարձրն է և լանջի տեսքով իջնում է Արարատյան դաշտավայր՝ հարավ-արևմուտքում: Կենտրոնի բարձրությունը մոտ 1000 մ է: Երևան քաղաքի տարածքը կազմված է ռելիեֆի չորս բաժանումներից՝ հյուսիսային հրաբխային սարահարթը (Եղվարդ, Կոտայք և Ջրվեժ-Նորք հրաբխային սարահարթ), հարավ-արևելյան թեք հարթավայրը (Շորաղբյուր-Նուբարաշեն թեք հարթավայրը և Էրեբունի լեռնաշղթան), կենտրոնական և հարավային գետային հարթավայրը (Հրազդան, Գետառ և Շորաղբյուր գետերի գետային հարթավայրը), մշակված հողերը: Քաղաքի տարածքի գետային համակարգը ներառում է Հրազդան գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից, Գետառ գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից և միանում Հրազդան գետին Էրեբունի համայնքում, Ջրվեժ և Շորաղբյուր գետերը, որոնք ցած են հոսում արևելյան լեռնաշղթայից և միանում Գետառ գետին:



Նկար 2. Ուսումնասիրվող տեղամասի ռելիեֆը և գետային ցանցը


Երկրաբանական տեսակետից Երևան քաղաքի տարածքում ամենաին երկրաբանական միավորը Ստորինից Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի նստվածքային շերտերն են: Երրորդայինից ստորին Պլեյստոցենի լավաները և տուֆը լայնորեն տարածված են հյուսիսային տարածքում: Նաև գետի հունի երկայնքով և Արարատյան դաշտավայրի քաղաքային տարածքում հայտնաբերվել են ջրհեղեղի ենթարկված հարթավայրի նստվածքներ (նկար 3): Քաղաքի մակերեսային գրունտը բաղկացած է հրաբխային ապարներից, նստվածքային ապարներից և դարավանդի նստվածքներից: Մակերևութային շերտը բաղկացած է ճեղքված հրաբխային ապարներից (բազալտ) հյուսիսային մասում, հողմահարված նստվածքային ապարներից՝ հարավարևելյան մասում, և դարավանդի դեպոզիտներից՝ հարավային և արևմտյան մասերում: Ապարների հատկությունների վրա մեծ ազդեցություն ունի հողմահարված վիճակը:



Նկար 3. Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական քարտեզ

Համաձայն «ԳԵՈՏԵԽՆԻԿ» ՍՊԸ-ի եզրակացության տեղամասի երկրաբանական կտրվածքը հետազոտված խորությունների սահմաններում ներկայացված է գրունտների 6 տարբեր շերտերով, որտեղ 5-րդ շերտը բազալտներ են (մոխրագույն, տեղ-տեղ շլակավորված, կարմրավուն երանգով, ծակոտկեն և ճեղքավորված, մասամբ ջարդոտված, երբեմն մեծաբեկորների աստիճանի): Առկա է բազալտի շերտի հերթափոխություն տարբեր հզորության հրաբխային խարամի հետ: Բազալտի հերթափոխվող առանձին շերտերի հզորությունը տատանվում է 0.6-ից 5.5 մետր: Պետք է նշել, որ նախագծվող շինության ստորգետնյա մասերը հնարավոր մակերևույթային ջրային հոսքից պաշտպանելու նպատակով նպատակահարմար է իրականացնել ստորգետնյա մասերի ջրամեկուսացում:

Երկրատեկտոնիկայի տեսանկյունից հետազոտվող տարածքում ընդգրկվում են հետևյալ ստորաբաժանումները՝ Բազում-Չանգեզուրի ինտենսիվ, Մերձարաքսյան չափավոր ծալքավորված և վերադրված օռոգեն ճկվածքների գոտիների (նկար 4):




Նկար 4. Ուսումնասիրվող տարածքի տեկտոնական քարտեզ

Բազում-Չանգեզուրի ինտենսիվ ծալքավորված գոտին բաժանվում է ենթագոտիների՝ Հանքավան-Չանգեզուրի ենթագոտի, Սևան-Ամասիայի օֆիոլիտային գոտի, Ծաղկունյաց անտիկլինորիում: Հանքավան-Չանգեզուրի, Սևան-Ամասիայի ենթագոտիների միջև սահման է հանդիսանում ռեգիոնալ խզվածքը, որը տարածվում է Շիրակի լեռնաշղթա-Սպիտակ-Վանաձոր-Սևանա լիճ ուղղությամբ: Մերձարաքսյան ծալքավորված գոտին բաժանվում է երկու ենթագոտիների՝ Երևան-Օրդուբադի և օռոգեն իջվածքների: Այն առանձնացված է ամպլիտուդայով, տեկտոնական շարժումների բնույթով և սեյսմոակտիվությամբ:

Գրավիտացիոն և սեյսմոլոգիական տվյալների հիման վրա կազմված խզվածքաբլոկային սխեմայի համաձայն ուսումնասիրվող շրջանն ունի բարդ մոզայիկ կառուցվածք՝ արտահայտված հարաբերականորեն միմյանց նկատմամբ բարձր և ցածր՝ տարբեր կարգի բլոկների հաջորդականությամբ:


Երկրակեղևի առանձնացված բլոկների սահմաններ են հանդիսանում խորքային խզվածքները, որոնք ունեն տարբեր տարածում և տեղադրում: Դրանց մեջ, սեյսմոտեկտոնական պոտենցիալի գնահատման ժամանակ, կարևոր նշանակություն ունի խզվածքների խումբը, որը սահմանազատում է միջարաքսյան բարձրադիր գոտին և Երևանյան գոտու սահմանային խորքային խզվածքները:

Երկրաբանա-տեկտոնական տեսանկյունից տարածքը գտնվում է Երևանյան և Գառնի ակտիվ խզվածքներով սահմանափակված տարածքում: Տարածքին հարակից շրջաններում գրանցված են բազմաթիվ պատմական և ժամանակակից երկրաշարժեր, որոնք դասակարգվում են որպես Երևանամերձ օջախի գոտի: Այն ներգրավում է Դվին և Փարաքարի երկրաշարժերի օջախների խմբերը, Գառնի օջախը, ինչպես նաև, առանձին համեմատաբար թույլ արտահայտված երկրաշարժերի օջախներ, որոնք աղեղնաձև շրջափակում են Երևանի տարածքը հյուսիսից: Գառնի 1679 թվականի հուլիսի 4-ի կործանարար երկրաշարժը 9-10 բալ ուժգնության ավերել է Երևանի Նորքի, Քանաքեռի, Նորագավիթի, Նորագյուղի, Ձորագյուղի և այլ շատ բնակավայրեր: Երկրաշարժից ավերվել են բազմաթիվ եկեղեցիներ և վանքեր: Երևանում Սուրբ Սարգիս, Սուրբ Հովհաննես և Ձորավոր եկեղեցիները: Փարաքարի երկրաշարժերի օջախների խումբը ներգրավում է 9 երկրաշարժ, որոնցից 7-ը տեղի է ունեցել 1937 թվին: Նրանցից առավել ուժեղը՝ 7 բալ ուժգնությամբ, տեղի է ունեցել 1937 թվականի հունվարի 7-ին, Երևան քաղաքի հարավարևմտյան սահմաններում: Շատ շինություններ ցնցումներից ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ, իսկ առանձին տներ փլվել են:



Նկար 5. 1937 թվականի հունվարի 7-ին տեղի ունեցած երկրաշարժի  
ինտենսիվության քարտեզ

Ըստ նոր սեյսմոտեկտոնական մոդելի ուսումնասիրվող տարածքում ընդգրկվող Երևանյան և Գառնի ակտիվ խզվածքների (նկար 6) համար հիմնական պարամետրերը գնահատվել և որոշվել են Կարախանյան և ուր. կողմից "Probabilistic Seismic Hazard Assessment for the Republic of Armenia" WB նախագծի շրջանակներում: Այդ աշխատանքների համաձայն՝



Նկար 6. Խզվածքների սխեմատիկ քարտեզ

**Երևանյան խզվածքի** (YeF) երկարությունը կազմում է  $19 \pm 3$  կմ և գնահատված առավելագույն մագնիստության  $5.3 \pm 0.3$  է: Երևանի խզվածքը գտնվում է Երևան քաղաքի հարավ-արևմտյան մասում: Երևանյան խզվածքի սեյսմիկ ակտիվությունը լավ հայտնի չէ, բայց եթե այն ակտիվանա, Երևան քաղաքը կարող է լուրջ տուժել: Խզվածքի բնույթի մասին քննարկումները սկսվել են դեռևս 1950-ական թվականներից (օրինակ՝ Ասլանյան, 1954, 1958; Գաբրիելյան, 1959, 1981), բայց դրա սեյսմիկ ակտիվության, երկարության, խորության, անկման, սեզմենտների վերաբերյալ պարզաբանումները քիչ են նույնիսկ հիմա: Քանի որ Երևանյան խզվածքի մեծ մասը ենթադրվում է, որ կարող է մակերևույթին արտահայտված չլինի: Այնուամենայնիվ, Նոր-Ուղիում իրականացված ուսումնասիրությունները հաստատեցին փխրուն մանրախճի վրա մեզոզոյան նստվածքը ծածկող փոքր անկյամբ վերնետք խզվածքը (վրաշարժ): Խզվածքի մի մասը կարող է հասնել մակերևույթին, սակայն, ավելի մանրամասն հետազոտության անհրաժեշտություն կա: Ըստ սեյսմալոգիական տվյալների (երկրաշարժերի մեխանիզմի վերլուծության), Երևան քաղաքից 30 կմ հեռավորության սահմաններում դիտարկված տեղաշարժի գերակշռող տեսակը նույն պես ստացվել է վերնետք: Նկարագրվող գոտում վաղ գործիքային

ժամանակաշրջանում՝ 1937 թվականին տեղի են ունեցած  $M=5.3$  և  $M=4.3$  մագնիտուդներով երկրաշարժեր: Անհրաժեշտ է նշել նաև, որ նկարագրվող խզվածքային գոտու հետ է կապված 2021թ. փետրվարի 13-ին՝ ք. Երևանից 13 կմ հարավ-արևմուտք,  $M=4.7$ , տեղի ունեցած երկրաշարժը, որը զգացվել է ք. Երևանում՝ 5-6 բալ, Արարատի, Արմավիրի, Կոտայքի մարզերում՝ 4-5 բալ, իսկ Արագածոտնի, Շիրակի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում՝ 3-4 բալ ուժգնությամբ: Երկրաշարժին հաջորդել է 112 հետցնցում:

**Գառնիի** խզվածքը բաղկացած է 5 սեգմենտներից, որից ամենաերկարը կազմում է մոտ  $84 \pm 5$  կմ և գնահատված առավելագույն մագնիտուդան  $7.3 \pm 0.3$  է: Գառնիի խզվածքի 1-ին սեգմենտն (GF1) ունի 56 կմ երկարություն, և անկում է  $20^\circ$  անկյան տակ հյուսիս-արևմուտքից արևմուտք: Խզվածքի հարթությունը իջնում է  $60^\circ-85^\circ$  դեպի հյուսիս-արևելք: Ալավար գյուղից հյուսիս-արևելք մինչև Փամբակ-Սևան-Սյունիք խզվածքը երկրորդային սեգմենտները ձևավորում են հորտսային կառույց: Հարավ-արևելյան եզրագծում GF1 սեգմենտը հատվում է GF2 սեգմենտով: Գործիքային շրջանում ամենաբարձր մագնիտուդով երկրաշարժը տեղի է ունեցել 1988 թվականի դեկտեմբերի 7-ին՝  $M=7.0$ : Գառնիի խզվածքի 2-րդ սեգմենտն (GF2) սեգմենտն ունի մոտ 84 կմ երկարություն և ձգվում է Մարմարիկ գետի հովտից մինչև Ազատ գետի հովիտը, որտեղ այն հատվում է հարավային GF3 սեգմենտին: Մակերևույթի վարքագծի դրսևորման տեսանկյունից այս սեգմենտն ավելի քիչն է ուսումնասիրված: GF2 սեգմենտն ավելի լավ է մերկանում Գառնի գյուղից դեպի հյուսիս, որտեղ այն վերադրված է GF3 և անցնում է Ողջաբերդի լեռնազանգվածի պլիոցենի հասակի տուֆոբրեկչիաների միջով՝ առաջացնելով գրաբեն: Գառնի գյուղից դեպի հյուսիս նկատվում է ուժեղ երկրաշարժի կողմից առաջացած ևս մեկ մակերևութային ճեղքվածք: Այն հնարավոր է առաջացած լինի 1679թ,  $M=7.0$  երկրաշարժի կողմից: Գառնիի խզվածքի երրորդ սեգմենտը (GF3) նրա ամենալավ արտահայտված հատվածներից մեկն է: Այն լավ արտահայտված է Գլաձոր գյուղից մինչև Արենի գյուղը և ունի 69 կմ ընդհանուր երկարություն: Սեգմենտի հիմնական անկման անկյունը կազմում է  $150^\circ$ , իսկ դեպի հյուսիս-արևելք այն խորանում է, հասնելով ընդհանուր մինչև  $80-90^\circ$ : Սեգմենտի երկայնքով նկատվում է աջակողմյան իջվածք (մոտ 150մ): Ելվին գյուղից դեպի հյուսիս-արևմուտք նույնպես նկատվում է աջակողմյան իջվածք: Գառնիի խզվածքի կենտրոնական հատվածում հորիզոնական տեղաշարժը Ազատ գետի շրջանում հասնում է մինչև 200 մ: Առանձնանում են տեղաշարժի երկու փուլ. առաջինը 100-150 մ է և վերագրում է Պլեյստոցենի սկզբին, իսկ մյուսը՝ 10-15 մ, և համապատասխանում է հոլոցենի ժամանակաշրջանին: Չորրորդ (GF4) և հինգերորդ (GF5) սեգմենտները զուգահեռաբար ձգվում են 60 կմ (GF4) և 45 կմ (GF5) դեպի հարավ-արևելք, պահպանելով գրեթե նույն ուղղությունը, ինչ որ GF3 հատվածը: Հյուսիս-արևելյան հատվածը համընկնում է GF3-ի հետ ձախակողմյան ուղղությամբ և լավ արտահայտված է հյուսիս-արևելյան կողմում, որն առաջացել է GF3 և GF4 հատվածների վերադրման արդյունքում: Այնուհետև, այն արտահայտված է Խաչիկ գյուղի տարածքում: Երկու սեգմենտներն էլ հանդես են գալիս տեկտոնական ակտիվությամբ, ինչը լավ



արտահայտված է ռելիեֆում և ինչի մասին վկայում են նաև ժամանակակից գետերի այլուվիալ նստվածքները:


Համաձայն ՀՀ ԳԱԱ «Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի «Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Քանաքեռ ՀԷԿ փողոցի 5/2 հասցեում գտնվող տեղամասի (տարածքի) գրունտների լայնական ալիքների տարածման միջին արագությունների և գերակայող պարբերությունների գնահատման նպատակով երկրաֆիզիկական ուսումնասիրությունների» հաշվետվության՝

- Գրունտների լայնական ալիքների տարածման միջին արագության ( $V_s30$ ) ընդհանրացված արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնասիրված տեղամասի գրունտների լայնական ալիքների տարածման միջին արագությունը՝  $V_s > 850$  մ/վ (աղյուսակ 1, նկար 7):

Աղյուսակ 1

**Ուսումնասիրված տեղամասի լայնական ալիքների տարածման միջին արագության ( $V_s30$ ) ընդհանրացված արդյունքները**

NN	$V_s30$ (մ/վ)
MASW 1	932.5
MASW 2	877.0
MASW 3	927.4
MASW 4	964.2



Նկար 7. Սեյսմիկ զոնդավորման (MASW) և միկրոտատանումների (H/V) կետերի տեղադիրքերը

- Միկրոսեյսմներով գրանցված տվյալներով ստացված արդյունքներից երևում է, որ տարածքի գրունտերի միկրոտատանումների գերակշռող պարբերությունների հիմնական գագաթնակետերը գտնվում են 0.138-0.327վրկ. տիրույթում (նկար 7):
- Սեյսմիկ զոնոավորման բազմակապուղի մակերևույթային ալիքների վերլուծության (MASW) և միկրոտատանումների (H/V) գրանցումների եղանակներով տեղամասի սովորաշերտի գրունտները համաձայն ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի 16-րդ կետի պետք է ընդունել որպես I-ին կարգ:

Այսպիսով, ստացված արդյունքները հիմք են ծառայել Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Քանաքեռ ՀԷԿ փողոցի 5/2 հասցեի տարածքում կառուցվող բնակելի շենքի նախագծման նպատակով ստանալ այդ տարածքի համար բնորոշ սինթեզված աքսելերոգրամա, որը ներկայացված է ներքո:

## 2. ՍԻՆԹԵՏԻԿ ԱՔՍԵԼԵՐՈԳՐԱՄԱՅԻ ՍՏԱՅՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համաձայն ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի 206 կետի, Երևան քաղաքի Արաբկիր համայնքի Քանաքեռ ՀԷԿ փողոցի 5/2 հասցեի տարածքում կառուցվող բնակելի շենքի նախագծման հաշվարկը անհրաժեշտ է կատարել երկրաշարժերի իրական կամ սինթեզված աքսելերոգրամաների կիրառմամբ:


Ելնելով այն հանգամանքից, որ ուսումնասիրվող տարածքի համար չկան ուժեղ երկրաշարժերի գործիքային գրանցումներ, ուստի անհրաժեշտ է ուսումնասիրվող տարածքի համար ստանալ տեղանքին բնորոշ սինթեզված աքսելերոգրամա:

### 2.1 Սինթետիկ աքսելերոգրամայի հաշվարկման մեթոդաբանությունը

Կիրառելով ժամանակակից հաշվարկային տարբեր եղանակներ, տվյալ տարածքի համար հաշվարկվել և կառուցվել է սինթետիկ աքսելերոգրամաներ: Վերջիններիս կառուցման համար հիմք է հանդիսացել ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի գրունտների սպասվելիք հորիզոնական արագացումների մեծությունները (PGA), ըստ սեյսմիկ գոտիների (2 սեյսմիկ գոտի – 0.4 g), աղյուսակ 4-ում բերված գրունտային պայմանների K<sub>0</sub> գործակիցը, ուսումնասիրված տեղամասի համար ստացված լայնական ալիքների տարածման միջին արագության (Vs30) ընդհանրացված արդյունքները (աղյուսակ 1), հնարավոր


երկրաշարժերի օջախի հիմնական պարամետրերը, ինչպես նաև տվյալ տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանները:

Հաշվարկները իրականացվել են հետևյալ ստորև բերված մեթոդաբանությամբ.




Հաշվարկային եղանակի էությունը կայանում է նրանում, որ հաշվարկների հիմքում դրվում է՝

1. ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերում բերված շենքի կամ կառուցվածքի ազատ տատանումների i-րդ ձևին համապատասխանող դինամիկության  $\beta$  կորը (նկար 8).



Նկար 8. Տարբեր գրունտային պայմանների համար ստացված դինամիկության կոր

## 2. Ստանդարտ սպեկտրը, որը համապատասխանում է 2-րդ սեյսմիկ գոտուն:




Նկար 9. 2-րդ սեյսմիկ գոտուն համապատասխան ստանդարտ սպեկտր

### 2.2. Սինթետիկ արբելերոգրամայի ստացման արդյունքները



Ուսումնասիրվող տեղամասի թվով 3 կետերի համար կառուցված սինթետիկ արբելերոգրամների տեսքերը և նրա հակազդման սպեկտրները՝ մարման գործակցի տարբեր կրիտիկական արժեքների դեպքում, բերված են նկարներ 10-ում և 11-ում, իսկ հաշվետվությանը կից նաև ներկայացվում են հաշվարկված սինթետիկ արբելերոգրամների գործիքային գրանցումների թվային տվյալները: Ստացված տվյալները, ըստ ՀՀՇՆ 20.04-ի ճշտության տեսանկյունից գտնվում են նորմատիվ սպեկտրի թույլադրելի սահմաններում:

N - 1





Նկար 10. Սինթետիկ արբելերոգրամայի տեսքը և նրա հակազդման սպեկտրը

N - 2



N - 3



Նկար 11. Սինթետիկ արտելերոգրամայի տեսքը և նրա հակազդման սպեկտրը

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտվող տարածքի համար կառուցվել է թվով 3 սինթետիկ աքսելերոգրամներ և իրենց համապատասխան հակազդեցության սպեկտրները, որոնք ճշտության տեսանկյունից գտնվում են նորմատիվ սպեկտրի (ՀՀՇՆ 20.04) թույլադրելի սահմաններում:

Հաշվետվությանը կից ներկայացվում է նաև հաշվարկված սինթետիկ աքսելերոգրամների գործիքային գրանցումների թվային տվյալները:

Պատասխանտու կարարողներ՝

Ե.գ.թ. Զ. Կարապետյան

Ե.գ.թ. Ա. Գևորգյան

Ռ. Կարապետյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ  
ՂԵԿԱԿԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

№ ՔՏՄ/ՕԳ.2.2/13800-23

28 / 06  
2023 թ.

«ԶԻ ԷՍ ԴԻՎԵԼԸՓՄԵՆԹ» ՍՊ ԱՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՏՆՕՐԵՆ ՈՈՒԲԵՆ ԱԼԱԿԵՐԴՅԱՆԻՆ  
ք.Երևան, Սայաթ Լովա 19շ.  
Էլ. փոստ՝ rubo2@yandex.ru

**Հարգելի պարոն Ալավերդյան**

Ի պատասխան Ձեր 20.06.2023թ. դիմումի՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը (այսուհետ՝ Տեսչական մարմին) քննարկել է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ղափանցյան փողոց 4/9 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի ճարտարապետական նախագիծը, և տեղեկացնում է, որ այն համապատասխանում է հրդեհային անվտանգության պահանջներին:

Միաժամանակ, Ձեզ անհրաժեշտ է Տեսչական մարմնի քննարկմանը ներկայացնել ինժեներական նախագծերը:

Սույն գրությունը վավեր է նախագծում համապատասխան դրոշմակնիքի առկայության դեպքում:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ**

ՄՐԱԶ ՊԱՊԻԿՅԱՆ

Signed by: PAPIKYAN ARAZ 3802880102

**ՄՐԱԶ  
ՊԱՊԻԿՅԱՆ**

Կատարող՝ *Ա.Խաչատրյան*  
Ստորագրածանուն՝ *Տ և Հ Ա վարչություն. ԱՏՓՎ բաժին*  
Մ  
Հեռ.՝ *060 86 66 66 (10-44)*



Հասցե՝ 0054, Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս, Ա. Միկոյան 109/8,  
Էլ. փոստ՝ utfsib@utfsib.gov.am, հեռախոսահամար՝ (+374 60) 86 66 66



# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

Էլ. Հասցե: arxitects@mail.ru

հեռ. 041822822



## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 23-24

<< 28 >> փետրվարի 2024թ.

ԼԻՑ 17384

**Պարզվիրապու՝ ՎԱՐԹԱՆ ՆԱԶԵՐՅԱՆ**

**Նախագծող՝ <<ԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՔԻԹԵՔՏՑ>> ՍՊԸ**

**Տնօրեն՝ Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ**

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ ք. Երևան Արաբկիր վարչական շրջան, Գ. Ղափանցյան փողոց 4/9 հասցեում Բազմաբնակարան շենքի կառուցման աշխատանքների շինարարության կազմակերպման նախագծային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:

Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:

Տնօրեն՝



Ն. Սիրեկանյան



«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ  
տնօրեն *Մ. Միրեկանյան*



**ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**ՀՀ ք. Երևան Արաբկիր վարչական շրջան, Գ. Ղափանցյան փողոց 4/9 հասցեում**  
**Բազմաբնակարան շենքի կառուցման աշխատանքների շինարարության**  
**կազմակերպման նախագծային փաստաթղթեր**

**Պատվիրարու՝ ՎԱՐԹԱՆ ՆԱԶԵՐՅԱՆ**

**Նախագծող՝ <<ԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՔԻԹԵՔՏ >> ՍՊԸ**

**Տնօրեն՝ Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ**

Սույն նախագիծը կատարված է համաձայն Երևանի քաղաքապետի կողմից տրված 01.10.2021թ. N01/18-07/3491 - Ա ճարտարապետահատակագծային առաջադրանքի և պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախագծով նախատեսվում է կառուցվող բազմաբնակարան շենքի շինարարության կազմակերպման բաժնում հիմքերի փոսորակի հողային շեպերի ուժեղացման աշխատանքների իրականացում, որպեսզի բացառվի շինարարական աշխատանքները իրականացնելիս փլուզումները: Հաշվի առնելով փոսորակի խորությունը նախատեսվում է իրականացնել փուլերով ըստ բարձրությունների: Հողային շեպերը նախատեսվում է ուժեղացնել ամրանային ցանցով տորկրետ բետոնի իրականացմամբ:

- 1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմիայնց համապատասխան
- 3.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

4. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

Ուսումնասիրելով ներկայացված նախագիծը

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախագիծը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

Տնօրեն



Ն. Միրեկանյան

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

Էլ. Հասցե: arxitects@mail.ru

հեռ. 041822822



ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 455-22

<< 25 >> հոկտեմբերի 2022թ.

ԼԻՑ 17384

Պատվիրապու՝ ՎԱՐԹԱՆ ՆԱԶԵՐՅԱՆ  
Նախագծող՝ <<ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՔԻԹԵՔՏՑ >> ՍՊԸ  
Տնօրեն՝ Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ ք. Երևան Արաբկիր վարչական շրջան, Քանաքեռ ՀեԿ Ղափանցյան 5/2 և Քանաքեռ ՀեԿ փողոց 11/3 հասցեում Բազմաբնակարան շենքի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:

Առդիր՝ եզրակացությունը 6 էջից:

Տնօրեն՝



Ն. Սիրեկանյան

«ԱՐՆԻՏԵԿՏ» ՍՊԲ  
տնօրեն՝ *Արմեն Սիրեկանյան*

**ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ ք. Երևան Արաբկիր վարչական շրջան, Քանաքեռ ՀԷԿ Ղափանցյան 5/2 և Քանաքեռ ՀԷԿ փողոց 11/3 հասցեում Բազմաբնակարան շենքի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթեր

**Պատվիրատու՝ ԿԱՐԹԱՆ ՆԱԶԵՐՅԱՆ**

**Նախագծող՝ «ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՔԻԹԵՔՏ» ՍՊԸ**

**Տնօրեն՝ Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ**

Սույն նախագիծը կատարված է համաձայն Երևանի քաղաքապետի կողմից տրված 01.10.2021թ. N01/18-07/3491 - Ա ճարտարապետահատակագծային առաջադրանքի և պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախագծի կազմում ներառված է

1. Ելակետային տվյալներ/ընդհանուր բացատրագիր/
2. Գլխավոր հատակագիծ
3. Ճարտարապետական լուծումներ
4. Կոնստրուկտորական լուծումներ/հաշվարկային մաս/
5. Ինժեներական ցանցեր
6. Շինարարության կազմակերպում

Ելակետային տվյալներում ներառված են հետևյալ փաստաթղթերը՝

1. Նախագծային կազմակերպության աշխատակազմի արտոնագրերի պատճենները /ճարտարապետ, ճարտարագետ-կոնստրուկտոր/ , ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից տրամադրված լիցենզիայի պատճենները:
2. Երևանի քաղաքապետի կողմից տրված 01.10.2021թ. N01/18-07/3491-Ա նախագծման թույլտվությունը/ճարտարապետահատակագծային առաջադրանք/:
3. Տեղագրական հանույթը:
4. Հողամասի սեփականության վկայականը և հողամասի կոորդինատները տրված Կադաստրի կոմիտեի կողմից:

5. Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրված 23 հուլիս 2021թ. NՎՋ4035/2021 տեխնիկական պայմանը ջրամատակարարման, ջրահեռացման և հեղեղատարի միացման կետերի վերաբերյալ:
6. Գազպրոմ Արմենիա ՓԲԸ-ի կողմից տրված 20 հուլիս 2021թ. N02/17.1/1896-2021 գազամատակարարման միացման կետի վերաբերյալ տեխնիկական պայմանը:

Ընդհանուր բացատրագրում ներառված է նախագծի մշակման հիմքը , հողատարածքի բնութագրերը, տվյալ օբյեկտի նախագծային հզորության, էներգիայի և ջրի ծախսի վերաբերյալ, բնապահպանական միջոցառումների մասին տեղեկություններ, տեղեկություններ ինժեներական ցանցերի և հաղորդակցուղիների վերաբերյալ, բնակչության տեղաշարժման սահմանափակումներով խմբերի կենսագործունեության պայմանների ապահովմանն ուղղված անհրաժեշտ լուծումները, նախագծվող օբյեկտի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները:

Նախագծով նախատեսվում է կառուցել բազմաբնակարան բնակելի շենք տասնվեց վերգետնյա և չորս ստորգետնյա հարկերից բաղկացած: Ստորգետնյա հարկերը ծառայելու են որպես ավտոկայանատեղի նախատեսված 62 մեքենաների կայանման համար, նկուղային հարկերում առկա են սանհանգույցներ, հակահրդեային ծորակների համար նախատեսված ջրավազան, տեխնիկական սպասարկման և օժանդակ սենյակներ: Բնակելի շենքի առաջին և երկրորդ հարկերը ծառայելու են որպես հասարակական սպասարկման տարածքներ/կոմերցիոն/, իսկ մյուս հարկերում տեղակայված են թվով 88 բնակարաններ: Ստորգետնյա հարկերը անհրաժեշտության դեպքում կարող են ծառայել որպես բնակիչների համար թաքստոց: Հարկերի միջև տեղաշարժը նախատեսվում է իրականացնել աստիճանավանդակով և վերելակներով: Աստիճանավանդակները կահավորված են օդի ներածման և ծխի հեռացման ինքնաշխատ համակարգով և հակահրդեհային դռներով: Բնակելի շենքի արտաքին հարդարումը նախատեսվում է իրականացնել տրավերտինե և սև տուֆե սալերով, ինչպես նաև արհեստական փայտե երեսապատման նյութերով, իսկ գետնախարիսխի և պատշգամբների հատվածում բազալտե երեսապատման սալիկներով: Բնակելի շենքի տանիքը նախատեսված է հարթ տիպի, կազմակերպված ներքին ջրահեռացման համակարգով: Կառույցի վերգետնյա հարկերում բնակելի տները ունեն բաց պատշգամբներ: Շինության արտաքին պատերը և բնակարանների ներքին բաժանարար

պատերը նախատեսվում է իրականացնել 20սմ հաստությամբ թեթևաբետոն բլոկներով շարով, իսկ բնակարանների միջսենյակային պատերը 10սմ հաստությամբ:

Բնակելի շենքի համար որպես կրող համակարգ ծառայում է տարածական երկաթբետոնե միաձույլ շրջանակակապային հիմնակմախքը, որի կոշտությունը ապահովվում է միաձույլ երկաթբետոնե շրջանակների և դիաֆրագմաների կոշտ հանգույցների միջոցով, ծածկերը միաձույլ ե/բ սալեր են, որոնք ուղղաձիգ կրող տարրերի միջև հանդիսանում հորիզոնական կոշտ սկավառակներ: Հիմքերը ժապավենային են խաչահատվող հիմնային հեծաններով, որոնց լայնական հաստությամբ ուղղանկյուն է 120\*150սմ հատվածքի, հիմնային հեծանները ամրանավորված են երկայնական A500C և լայնական A240c դասի ամրաններով, ծանր բետոն B25 դասի,  $\gamma = 2.20$  տ/մ<sup>3</sup> ծավալային կշռով:

Սյուների հատվածքը 60\*60սմ, 60\*70սմ, 60\*90սմ, 60\*100սմ, 60\*120սմ և 60\*160սմ, սյուների բետոնը ծանր բետոն B25 դասի,  $\gamma = 2.20$  տ/մ<sup>3</sup> ծավալային կշռով, երկայնական ամրանները - A500C դասի, լայնական ամրանները – A240c դասի:

Պարզունակները 60\*60 սմ, 60\*70 սմ և 60\*90 սմ հատվածքի: Պարզունակների բետոնը ծանր  $\gamma = 2.20$  տ/մ<sup>3</sup> B25 դասի: Ամրանավորումը իրականացված է երկայնական A500c և լայնական A240c դասի ամրաններով: Ծածկերը իրականացվում են միաձույլ ե/բ սալի տեսքով, ստորգետնյա հարկերում 20սմ, իսկ հարկերում 18սմ հաստությամբ կրկնակի ամրանավորմամբ: Ստորգետնյա հարկերում արտաքին պատերը գրունտի հետ շփման հատվածներում պատվում են ջրամեկուսիչ նյութերով: Ստորգետնյա ավտոկայանատեղի արտաքին պատերը 60սմ հաստությամբ միաձույլ երկաթբետոնից կրկնակի ամրանավորմամբ: Բնակելի շենքերի աստիճանները և վերելակի հորանը իրականացվում են միաձույլ երկաթբետոնից: Միջնորմերը իրականացվում են թեթևաբետոնե միջնորմային պատի շարվածքով: Նախագծվող կառույցներում բոլոր կրող տարրերում օգտագործվում է ծանր լցանյութերով բետոն:

Շենքի հիմնակմախքի հաշվարկը ուղղահայաց բեռնվածության և սեյսմիկ ազդեցությունների համար կատարված համակարգչային ծրագրով ըստ ՀՀՇՆ 20.04-2020 երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմերի: Հաշվարկի ժամանակ օգտագործվել է՝

գրունտների կարգը 1-ին,

գրունտային պայմանների գործակիցը -  $K_0 = 0.8$ ,



թույլատրելի վնասվածքների գործակիցը -  $K_1 = 0.40$

սեյսմաուժգնության գործակիցը -  $A=0.4$

պատասխանատվության գործակիցը -  $K_2 = 1.0$

փոխազդեցության գործակիցը -  $K_3 = 1.0$

Տատանման պարբերությունները՝

-երկայնական ուղղությամբ -----  $T_x=0.649$  վրկ

-լայնական ուղղությամբ -----  $T_y=0.861$  վրկ

Հիմքի մակարդակում առավելագույն սեյսմիկ ուժերը X և Y ուղղություններով համապատասխանաբար կազմում են 2314.66 և 2314.66 տ:

Հարկերի շեղվածության մեծությունները X և Y ուղղություններով տատանվում են համապատասխանաբար 4.90 մմ և 6.60 մմ սահմաններում:

Բնակելի շենքի համար ջրամատակարարման աղբյուր է հանդիսանում շենքի տարածքից մոտ գտնվող պողպատե ջրագիծը, նախագծում նախատեսվել է ստորգետնյա հարկում պոմպակայանի հանգույց: Միացման կետում նախատեսվել է փականային հոր, իսկ ջրաչափական-փականային հորը նախատեսվել է շենքի հատվածում՝ ջրաչափի տեղադրմամբ: Դեպի կառույց ջրի մատակարարման պոլիէթիլենե խողովակը նախատեսվում է իրականացնել խրամուղով, խրամուղու ետլիցքը՝ ավազով: Ջրամատակարարման կանգնակները նախատեսվել է պողպատե խողովակներից, իսկ ներքին համակարգը պոլիպրոպիլենե խողովակակներց: Նախագծով նախատեսված բնակարանների կոյուղու ինքնահոս հեռացում դեպի բակային կոյուղու համակարգ: Կոյուղու կանգնակները վերևի հատվածում կատարում են ծխնելույզի ֆունկցիա: Կոյուղու ներքին համակարգը նախատեսվում է իրականացնել PVC լայնուկավոր խողովակներից: Կոյուղու թողարկ խողովակների համար շենքերից 3.0մ հեռավորության վրա նախատեսված է հորեր:

Հարթ տանիքից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրիոս ցանցով հեռանում են անձրևատար կոյուղու բակային ցանց, որը միանում է փողոցային հեղեղատար կոյուղուն: Ներքին ջրիոս խողովակները նախատեսված են պոլիէթիլենային խողովակներից, ձմեռային պայմաններում խողովակների մեջ ջրի սառեցումը բացառելու համար նախատեսվել է էլեկտրական պարուրակ: Ավտոկայանատեղերի լվացման, հալոցքի և հրդեհամարումից առաջացող ջրերի հեռացման համար ստորգետնյա

հարկերում հատակի վրա նախատեսված են հոսակներ և ջրհավաք առվակներ, որոնց միջոցով ջրերը հավաքվում են փոսորակների միջև և մեխանիկական եղանակով հեռացվում են բակային հատվածի կանաչ գոտի կամ ասֆալտի վրա:

Բնակելի շենքի ներքին տարածքների լուսավորության մասի մոնտաժը նախատեսված է իրականացնել BBHHC մակնիշի հրակայուն և ցածր քանակությամբ հալոգեն պարունակող հաղորդալարերով, սվաղի և հատակի շերտի տակով: Մայրուղային գծերը դեպի հաշվիչների արկղեր նախատեսվում է ուժային մալուխներով: Շենքի գլխավոր բաշխիչ վահանները տեղադրվում են առաջին հարկում նախատեսված սենյակներում: Բաշխիչ վահանակներից բեռը բաշխվում է երկու վաքերով, դեպի սպառիչներ: Շենքում մալուխները անցկացվում մալուխատարերով և փոսորակներով սվաղի տակով: Շենքի միջանցքների լուսավորությունը իրականացվում է լուսադիոդային լուսատուներով, որոնք համալրված են շարժման տվիչներով:

Շենքերում նախատեսվում է իրականացնել օդափոխության արհեստական համակարգ ստորգետնյա ավտոկայանատեղիից, օդի ներածման և արտածման համակարգերի միջոցով և ծխահեռացման համակարգի իրականացում հակահրդեհային պաշտպանության համար: Տամբուրներում, վերելակներում և աստիճանավանդակներում նախատեսված են թարմ օդի դիմահար համակարգեր: Բնակարաններում նախատեսվել է անհատական պատից կախովի գազի կաթսաներով: Նախագծով նախատեսված է արտաքին գազատարի անցկացում գազային հաշվիչները նախատեսվում է տեղադրել առաջին հարկում նախատեսված սենյակում:

Նախագծված է հրդեհի ահազանգման հասցեավորված համակարգ, որը հնարավորություն է տալիս ճշգրտությամբ, որոշել տեղեկատվություն հաղորդող ազդասարքի տեղը և համապատասխան ձևով արձագանքել առաջացած տագնապի կամ անսարքության ազդանշաններին: Նախագծված հրդեհի ահազանգման համակարգը նախատեսված է հրդեհի օպերատիվ հայտնաբերման, աշխատակիցներին հրդեհի մասին նախազգուշացման, ինչպես նաև տագնապի ազդանշանի ձևավորման համար: Համակարգն աշխատում է երկու ռեժիմով՝ ավտոմատ միացման և ձեռքով միացման: Հակահրդեհային անվտանգությունը ապահովելու համար ստորգետնյա հարկում նախատեսվում է կառուցել մետաղական ջրամբար և պոմպակայան համալրված պոմպերով:


Բանակելի համալիրի տարածքը նախատեսվում է բարեկարգել, միջբակային հատվածները ասֆալտապատել:



1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմիայնց համապատասխան
3. Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին
4. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

Ուսումնասիրելով ներկայացված նախագիծը

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախագիծը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

Տնօրեն՝		Սիրեկանյան
Փորձագետ՝		Խաչատրյան
Փորձագետ՝		Ս. Ստեփանյան
Փորձագետ՝		Վ. Ղազարյան
Փորձագետ՝		Ա. Խաչատրյան
Փորձագետ՝		Տ. Հայրապետյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՆԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ 17384

ԲԱՐՄԱՆԵՐԱԿԱՆ ՓԱՏՆԱԹՂՈՆԻ ՓՈՐՁԱՔՆԱՆՈՒԹՅԱՆ  
(ԲԱՏՈՒԹՅԱԸ ԵՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՆՏՎՈՒԹՅՈՒՆ ԶՊԱԿԱՅՈՂ ԱՆԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ  
(ԳՂԹՈՒՆԵՐՈՒՅԱՆ ԵՆՏԱՊ)

ՏՐԱՄԵ «13 ԶՈՒՆՎԱՐԻ 2020թ.» «ԱՐԱՆՏԵԿՏ» ՍՊԸ ՇՈՐԱԿՅՈՒՄԻ, ՇՈՐԱԿՍՈՒՓ, 83, 40 ԲՆ.



ԱՄՄԱՍԿԵՏ


ԳՂԹՈՒՆԵՐՈՒՅԱՆ ՎԱՐՈՒՄԸ

Վ. ԿԵՐԱՆՅԱՆ  
(անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՆԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ



Հաստատված է  
ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության  
ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

տնօրեն  Վ. Գևորգյան

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕՐՅԵԿՏԻ ԵՄՍԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2314.1

ք.Երևան


26.10.2022թ.

Համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի՝ Վարթան Նազերյանի և ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի միջև 25.10.2022թ-ին կնքված N 2314 պայմանագրի 25.10.2022թ-ից մինչև 26.10.2022թ-ը «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձաքննության վարչության վերելակների, շարժասանդուխքների, ճոպանուղիների և կարուսելների տեխնիկական անվտանգության փորձաքննության բաժնի փորձագետ Նարեկ Լազարյանի կողմից տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկվեց՝ Վարթան Նազերյանի կողմից ներկայացված, ք. Երևան Արաբկիր Գ. Ղափանցյան փողոց 4/9 հասցեում տեղադրվող, աշտարակային կոունկ արտադրական վտանգավոր օբյեկտի տեղադրման և շահագործման աշխատանքների կազմակերպման նախագծային փաստաթղթերը:

Համաձայն նախագծային փաստաթղթերի պարզվեց, որ աշտարակային կոունկ արտադրական վտանգավոր օբյեկտի տեղադրման և շահագործման աշխատանքների կազմակերպման նախագծային փաստաթղթերը, համապատասխանում են տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին:

Տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկված Վարթան Նազերյանի կողմից ներկայացված, ք.Երևան Արաբկիր Գ. Ղափանցյան փողոց 4/9 հասցեում տեղադրվող, **աշտարակային կոունկ** արտադրական վտանգավոր օբյեկտի տեղադրման և շահագործման աշխատանքների կազմակերպման նախագծային փաստաթղթերին տրվում է **դրական** եզրակացություն:

Փորձագիտական եզրակացությանը կցվող նյութերը՝  
արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերը:

Փորձագետ  Ն. Լազարյան, N 093  
ստորագրությունը, ազգանունը, վկայականի համարը



Հաստատված է

«ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի»

*[Signature]*

Վ. Գևորգյան

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏԻ ԼԱՄԱԳՈՒՅՐՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2314

ք. Երևան

26.10.2022թ.

